

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՑ ԲԻԶՄԸՆՏԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՑՑ

1950 Փետրուար 19- 1951 Յունվար 28

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ԳԵՐԱՇՆՈՐՀ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ  
ՅԱՐԳԵԼԻ ԵԿԵՂԵՑՈՒՑ ԱՆԴԱՄՆԵՐ

Մենք այս տարեկան ղեկոյցով կուղենք մեր ընդհանուր գործունէութեան պատկերը տալ՝ իր մանրամասնութեամբ, եւ կը փափաքինք որ ներկաները ուշի-ուշով մտիկ ընեն եւ վերջաւորութեան քննարկի ենթարկեն զայն: Միայն այսպէսով է որ մենք կարող կըլլանք մեր բացերու մասին խօսիլ եւ շինիչ ու գործնական առաջարկներով զանոնք վերացնել: Կը փափաքինք որ մեր անդամները՝ ի սէր մեր սիրած Եկեղեցոց եւ ի շահ մեր համայնքին՝ ըլլան լրջախոհ, զուսպ եւ հաւատարիմ մեր ընդգրկած աշխատանքի վսեմութեան:

Դուք մեր ղեկոյցէն որոշապէս պիտի տեսնէք թէ մենք ունեցած ենք բաւականին լաւ գործունէութիւն՝ տւեալ պայմաններու տակ եւ միեւնոյն ատեն ապահոված ենք բաւականին կոկիկ գումար մը՝ թէ մեր ընթացիք ծախքերը գոցելու եւ թէ Եկեղեցուոյ-Սրահի Շինութեան գործին օգնելու: Ջանացած ենք մեր Եկեղեցուոյ անդամակցութեան թիւը բարձրացնել, ժողովուրդին հետ արտասերտ կապ հաստատել, Եկեղեցական արարողութիւններ ծրագրել եւ այսպէսով վեր պահել մեր գաղութի բարեպաշտ ժողովուրդի հաւատքը դէպի Բարձրեալն Աստուած եւ դէպի Եկեղեցին:

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Մեր Հոգաբարձական կազմը կը բաղկանայ Հինգ անդամները- Պր- Գրիգոր Մակարեան Պր- Համբարձում Հայվանեան, Պր- Նշան Թուստիկեան, Պր- Վահան Ղազարեան եւ Պր- Գրիգոր Գրիգորեան: Ինչպէս գիտէք, այս անդամներէն երկուքը՝ Պր-Համբարձում Հայվանեան եւ Պր- Վահան Ղազարեան Հոգաբարձութեանս անդամ ընտրուեցան Փետրուար 19-ի անդամական ժողովին եւ Պր- Գրիգոր Գրիգորեան վերընտրուեցաւ: Հոգաբարձութեանս կազմը վաւերացուեցաւ Փետրուար 24, 1950-ին Առաջնորդարանի կողմէ՝ ձեռամբ Առաջնորդական փոխանորդ Տ- Սիոն Եպիսկոպոսի կողմէ:

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ՓՈՂՈՎՆԵՐ

Հոգաբարձու թիւնս իր հաշուէտու շրջանին ունեցած է 12 ժողովներ՝ որ մեծա-  
մասամբ եղած են լիազուգում ժողովներ: Մենք մեր այդ ժողովներով շանացած ենք  
մօտէն ծանօթանալ գաղութիս հետ կապուած հարցերուն եւ աշխատած ենք ըստ այնմ  
գործունէութեան ծրագիր պատրաստել: Մեր ժողովներուն մէջ կանոնաւորապէս  
կարդացած ենք Առաջնորդարանէն եկած Թղթակցութիւնները եւ ճշգրտակաւ  
ընթացք տուած անոնց հրահանգներուն: Նոյնպէս՝ օրը-օրին տեղեակ պահած ենք  
Առաջնորդարանը՝ մեր կատարած աշխատանքներու նկատմամբ՝ եւ խնդրած իրենց  
Թելադրութիւնները զանազան հարցերու կապակցութեամբ:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ  
ՀԱՍՈՒԹԱԲԵՐ ԶԵՆՆԱՐԿՆԵՐ

Անցնող տարուայ ընթացքին մենք սարքած ենք երկու հասութեան ձեռնարկներ-  
Մին Ջատկուայ առթիւ իսկ միւսը՝ որպէս դաշտահանդէս- եւ պէտք է ըսել որ  
երկուքն ալ քաջալերուած են գաղութիս Հայ հասարակութեան կողմէ: Հոգ տեղին  
է ըսել, որ ըստ մեր տարեկան ընտրական ժողովի տուած որոշման համաձայն՝  
յայտարարած էինք երկու ձեռնարկներն ալ ի նՊԱՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՌՈՑ-ՍՐԱՀԻ շինու-  
թեան համար- անկեղծ ըլլալու համար հոս պէտք է շեշտենք թէ՝ մեր այդ զոյգ  
ձեռնարկները պէտք եղածին չափ չի քաջալերուեցան եւ մենք մեր սպասած նիւթա-  
կան արդիւնքը ձեռք չի ձգեցինք: հակառակ անոր՝ որ մենք կսպասէինք ՏՅՏՅ թէ ի  
նպաստ ԵԿԵՂԵՑՈՒՌՈՑ-ՍՐԱՀԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ յայտարարուիլը ալ աւելի ժողովուրդին սրտին  
կը խօսի: Մենք այդ զոյգ ձեռնարկներէն զուտ շահ ունեցած ենք 323-81 եւ  
ժամանակին՝ ճշգրտակաւ փոխանցած ԵԿԵՂԵՑՈՒՅ-ՍՐԱՀԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ Յանձնախում-  
բի Գանձապահ Պր- Նշան Շահինեանին եւ ստացած համապատասխան ստացականները:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԵՍԵՐ

Մեր պաշտօնէութեան շրջանին երեք անգամ Սուրբ Պատարագ մատուցուած է Սեյնթ  
փոլս Եպիսկոպոսականաց եկեղեցուոյ մէջ: Առաջին երկուքը կատարուած է ձեռամբ  
Հոգեշնորհ Տ- Թորգոմ վարդապետ Մանուկեանի, իսկ վերջինը՝ Արժանաւոր Լեւոն  
Քահանայ Առաքելեանի ձեռամբ: Եկեղեցական արարողութիւնները տեղի ունեցած են-

Ա- Փետրուար 19, 1950- ~~29-02-1950~~ Բ- Ապրիլ 30, 1950- Գ- Նոյեմբեր 5, 1950-ին:



երկպատիկ ցանկը պատրաստող Յանձնախումբ մը, որոնք իրենց կարգին այդ աշխատանքը կատարեցին եւ ցանկը յանձնեցին Հոգաբարձութեանս: Կարժէ որ յաջորդ տարուայ Հոգաբարձութիւնը նոյնը ընէ եւ եթէ կարելիութիւն ունենան՝ գէթ տարուայ ընթացքին ունենան ուրիշ անդամական ժողովներ՝ տարուելիք աշխատանքներու համար խորհրդակցելու: Պէտք է որ կատարուելիք աշխատանքներու ամբողջ ծանրութիւնը մի միայն Հոգաբարձութեանց ուսերուն վրայ ձգուի:

**ԵԿԵՂԵՑՈՒՈՅ-ՍՐԱՀԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ  
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԵՒ ՄԵՆՔ**

Մեր կապը այս տարուայ գործունէութեան ընթացքին այնքան ալ զորաւոր կապ չը հաստատեցինք Եկեղեցուոյ-Սրահի Շինութեան Յանձնախումբի հետ: Ոչ անոնց հետ խառն ժողով ունեցանք եւ ոչ ալ անոնցմէ հրաւեր ստացանք իրենց ժողովներու ներկայ ըլլալու: Կը խորհինք թէ ատոր գլխաւոր պատճառը այն էր՝ որ այդ Յանձնախումբը անցնող տարուայ ընթացքին գրեթէ աշխատանք չէ կատարած եւ թէ առանցնացած եւ լուծուած վիճակ մը ունեցած է: Շինութեան Յանձնախումբը տարուայ զկզբնաւորութեան բաւականին գործունէութիւն ցոյց տուաւ եւ շարժում ստեղծեց, սակայն դժբախտաբար այդ երկար չի տեսց եւ անոնք մատնուեցան անգործութեան: Նկատի ունենալով որ այդ Յանձնախումբը իր առանձին զեկոյցով պիտի ներկայանայ այս ժողովին՝ մենք զանց կընենք ալ աւելի երկար խօսիլ այս մասին: Միայն պէտք է խոստովանիլ՝ որ Հոգաբարձութիւնը իր կարգին՝ պէտք եղած հետաքրքրութիւնը ցոյց չտուաւ եւ զանոնք աշխատանքի չի մղեց: Մենք կը փափաքինք որ այսօրուայ ժողովը քիչ մը ժամանակ տայ՝ եւ Յատուելով Գերաշնորհ Տ-Տիրան Եպիսկոպոս ներսոյեանի ներկայութենէն՝ մանրամասն քննէ Եկեղեցուոյ-Սրահի Շինութեան հարցը եւ գտնէ վերջնական լուծում մը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՈՅ ԴՊՐԱՅ ԴԱՍԸ

Պէտք է շնորհաւորել Մեր գաղութի դպրաց դասի անդամները: Անոնք բոլորն ալ մեր ընդհանուրի գնահատանքին արժանի են: Անցնող տարուայ ընթացքին մեր Դպրաց Դասը թէ որպէս Կազմակերպութիւն երեւցած է հրապարակի վրայ իր յաջորդական ձեռնարկներով եւ թէ որպէս Դպրաց Դաս՝ շարունակ մասնակցութիւնը բերած է մեր եկեղեցական արարողութեանց: Անոնց տարեկան գործունէութեան մանրամասնութեան դուք պիտի ծանօթանաք՝ երբ անոնք իրենց զեկոյցը

Ձեզ ներկայացնենք թիչ վերջ, ուստի այդ մասին ալ չենք ուզեր երկար խօսիլ: Ճիշդ է թէ Դպրաց Դասը-ինչպէս ըսինք թիչ վերը- ունեցած է իր յաջորդական յաջող ձեռնարկները, սակայն պէտք է ընդունիլ որ անոնք թերի գտնուած են մեր նախորդ տարուայ ընտրական ժողովի տուած որոշման հանդէպ- անոնք անցնող տարուայ ընթացքին իրենց ձեռնարկներէն գոյացած գումարներու զուտ շահը բնաւ չեն փոխանցած Եկեղեցուոյ-Սրահի Շինութեան Յանձնախումբին, թերութիւն մը՝ որ կը խորհինք թէ յաջորդ տարի չի պիտի կրկնուի:

Մենք եւ ՌԻՐԻՇ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Որքան ալ որ մեր անցեալ տարուայ ընտրական ժողովը պարտք դրաւ թէ Հոգաբար- ձուութեան ~~է~~ թէ Դպրաց Դասի վրայ՝ որ իրենց տարեկան ձեռնարկներէն գոյացած գու- մարներու զուտ շահը Շինութեան Յանձնախումբին փոխանցէ՝ Հոգաբարձութիւնս յարմար տեսաւ որ գաղութիս մէջ գոյութիւն ունեցող այլ հասարակական կազմ- կերպութիւններ եւս իրենց դրական թանգակութիւնը բերեն այս գործի յաջողու- ութեան համար- եւ այդ իսկ պատճառաւ՝ մասնաւոր հրաւիրագրով՝ խորհրդակցական ժողովի մը կանչեցինք տեղուոյս Յառաջդիմականի, էՅ-ՎԱՅ-էՅ-ի, Հայ Բարեգոր- ծական Ընդհանուր Միութեան Երիտասարդաց Կազմակերպութիւնը եւ Դպրաց Դասը: Այս ժողովին ներկայ էր նոյնպէս Հոգաբարձութիւնս իր ամբողջ կազմով: Պէտք է ըսել որ յիշեալ կազմակերպութիւնները բոլորն ալ իրենց ներկայացուցիչնե- ռով ներկայ եղան խորհրդակցական ժողովին եւ պաշտօնապէս խոստացան իրենց թանգակութիւնը բերել Եկեղեցուոյ-Սրահի Շինութեան համար սարքուելիք ընդհա- նուր մեծ ձեռնարկին: Յանձնախումբը անցաւ գործի, սակայն դժբախտաբար անոր գոյութիւնը երկար չը տեւեց՝ եւ կարճ ժամանակուայ մէջ գոյութենէ դադրեցաւ: Մենք կը հաւատանք թէ այդ աշխատանքի ձախողութեան գլխաւոր պատճառը այն էր՝ որ Շինութեան Յանձնախումբը այդ օրերուն արդէն իսկ անգործութեան դատապար- տուած էր, եւ թէ տեսնուեցաւ թէ Հոգաբարձութեան այդ ուղղութեամբ սարքած ձեռնարկները պէտք եղած քաջալերութիւնը ~~չ~~ չեն ~~ստանար~~ ստանար ժողովուրդի կողմէ:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՅԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Նախորդ շրջանի Հոգաբարձութիւնը մեր շրջանի սկզբնաւորութեան առաջին ժողովին մեզ յանձնեց 509-94 տուար, ներկայիս Հոգաբարձութեանս անունով պանքը

պատրաստ ունինք՝ 507-44 սենթ, մէկ խօսքով 2-50 սենթ պակաս՝ ինչ որ մեզ  
 յանձնուած էր, սակայն մենք Առաջնորդարան ղրկած ենք 110 տուար, իսկ Եկեղեց-  
 ոււոյ-Սրահի Երեսնութեան Յանձնախումբին փոխանցած՝ 323-81 սենթ: Մեր նդհանուր  
 դրամական ելեւմուտքի մասին մանրամասն պիտի տեղեկանանք երբ Հոգաբարձութեանս  
 Քանձապահ Պր- Գրիգոր Մակարեան այդ մասին ղեկուցէ:

ԵԶՐԱԿԱՓԱԿՈՒՄ

Վերջացնելով մեր տարեկան գործունէութեան ղեկույցը՝ ըսենք հետեւեալը, որ  
 մեր կարգ մը թերութեանց գլխաւոր պատճառը հանդիսացած է Հոգաբարձութեանս  
 միատարր եւ համախոհ չըլլալը: Մեր աշխատանքները դանդաղ առաջ գացած են՝  
 եւ միացեալ աշխատանք<sup>շատ</sup> չենք կատարած եւ այսպէսով որոշ թուելութիւն առաջա-  
 ցած է Հոգաբարձութեանս կազմին մէջ, երեւոյթ մը՝ որ բնաւ առողջութեան նշան չէ:  
 Հոգաբարձութեան մը կազմի մը միատարր եւ համախոհ ըլլալը խիստ անհրաժեշտ է,  
 հետեւաբար, երբ մեր անդամները յաջորդ տարուայ Հոգաբարձութեան ընտրութիւն  
 կը կատարեն՝ այդ պարագան պէտք է նկատի ունենան:

Բարեկամներ, պայմանները մեզ բաւականին նպաստաւոր են- ըլլալով զուտ եկեղե-  
 ցական կազմակերպութիւն մեզ համար ստեղծուած է գործունէութեան հսկայ եւ նը-  
 պաստաւոր դաշտ մը, միայն թէ մենք պէտք է ըլլանք ալ աւելի ճկուն, ալ աւելի  
 զգաստ եւ ալ աւելի գործունեայ՝ մեր Հոգաբարձութեան աշխատանքները ալ աւելի  
 ժողովրդականացնելու համար:

Մենք այս առթիւ մեր խորհին շնորհակալութիւնները կը յայտնենք մեր եկեղեցոււոյ  
 բոլոր անդամներուն եւ թէ մեր Ռիչմընտի եւ Հոփվելի գաղութի Հայ համայնքին,  
 որ անցնող տարուայ ընթացքին մեր ձեռնարկած աշխատանքը արդիւնաւոր դարձնելու  
 համար իրենց թանգակութիւնը բերին: Առանց հաւատացեալ ժողովուրդի թանգակու-  
 րեան եւ զոհաբերութեան մեզ համար կարելի չէր ըլլար մեր ստանձնած գործը  
 գլուխ հանել: Մեր փափաքն է, որ այս գոյգ գաղութի հաւատացեալ ժողովուրդը  
 յաջորդ տարուայ Հոգաբարձութեան աշխատանքներուն ալ աւելի զորավիգ հանդիսանայ՝  
 որ անոնք ալ իրենց կարգին ալ աւելի բաց ճակատով ներկայանան իրենց գործունէու-  
 րեան տարեշրջանի վերջին ընտրական ժողովին:

Հոս նոյնպէս տեղին է, եւ պէտք է որ մեր խորհին շնորհակալութիւնները յայտ-  
 նենք Գերաշնորհ Տ- Տիրան Եպիսկոպոս Ներսոյեանին՝ որ որպէս Բարեխնամ

Առաջնորդ Հայոց Ամերիկայի, իր հայրական խրատներովն ու հրահանգներով թէ մեր ընդհանուր աշխատանքներուն ուղղութիւն տուած է եւ թէ մեր կատարելիք գործը դիւրացուցած:

Զենք կրնար մոռնալ Հոգեշնորհ Տ- թորգոմ Վարդապետ Մանուկեանի Հոգաբարձութեանս եւ Դպրաց Դասի եւ Շինութեան Յանձնախումբի տուած «ժանդակութիւնը» իր յաջորդական երկու այցելութեանց առթիւ՝ որուն եւս մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք: Շնորհակալութիւն կը յայտնենք Արժանաւոր Լեւոն Քահանայ Առաքելեանին՝ որ Նոյեմբեր 5-ի այցելութեամբ իր լաւագոյնը ըրաւ թէ գաղութիս բաւալատ ժողովուրդը հոգեւորապէս միխիթարելու եւ թէ մեր եկեղեցական գործերը արդիւնաւոր դարձնելու ուղղութեամբ:

Մենք մեր թերիներով միասին մեր լաւագոյնը ըրինք հաշուետու շրջանին: Կը մաղթենք որ յաջորդ տարուայ Հոգաբարձութիւնը մեր փորձառութենէն «գտուելով» միեւնոյն սխալները չի գործէ եւ ալ աւելի մեծ հաւատքով մօտենա նուիրական գործին:

Ի ԴԻՄԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՌՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՌԻԶՄԸՆՏԻ

ԱՏԵՆԱՊԵՏ՝  
*[Signature]*  
ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ

ԱՏԵՆԱԴՊԻՐ՝  
*[Signature]*  
ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ